№ 97 — ՔԱՆ ԵՒ ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1884

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Տարեկան գինն է 10 ռուբլի։
Վեց ամսուանը՝ 5 ռ., երեք ամսուանը՝ 3 ռ., ամիսը 1 ռ.։
Առանձին համարներով իւրաքանչիւրը 5 կոպէկ։

Խմբագրատունը բաց է ամեն օր բացի կիւրակէ և տօն օրերից առաւօտեան 11—2 ժամը կէսօրից յետոյ։

Յուսարարագրացիք զիմում են ուղղակի խմբագրութեան հետեւեալ հասցէով.— Въ ред. газету «Меду Айастанаго», въ Тифлисъ, կամ Redaction de «Meghou Haïastani», à Tiflis. (Caucase).

Խմբագրութեանս ուղղած թէ յօդուածները և թէ նամակները պէտք է պարզ գրուած լինին գրողի ստորագրութեամբ և հասցէով։ Խմբագրութիւնը կարող է փոփոխել, ուղղել և կրճատել յօդուածները։ Խմբագրութիւնը իւր վերայ չէ առնում յետ ուղարկել յօդուածները և պահում է երկու ամիս մինչև յարմարանց։

Յայտարարութիւնների համար վճարում են ամեն մի բառին 2 կոպ։ Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն և օտար լեզուներով։ Յայտարարութիւններ ընդունվում են խմբագրատանը, «Կովկաս» հիւրանոցի տակ պ. Տէր-Յովսէփեանի ծխախոտի խանութում են պ. Շահվերդեանի պավիլիոնում։

ԱՌԱՋԻԿԱՑ **1885** ԹՈՒԱԿԱՆԻՆ

„ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԼՐԱԳԻՐԸ

Կը հրատարակվի նոյն դիրքով եւ ծրագրով.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

I) Պետական կարգադրութիւնք.— II) Առաջնորդողներ առօրեայ ամենատեսակ խնդիրների մասին։— III) Ներքին տեսութիւն— Տեղական և հասարակական խնդիրների վերաբերութեամբ յօդուածներ և թղթակցութիւնք.— IV) Քաղաքական վիճակի վերայ յօդուածներ և լուրեր.— V) Մանր լուրեր.— VI) Խառն լուրեր.— VII) Բանասիրական— Ֆէլիէտօններ, Պատկերներ, Վեպեր, Մատենախօսութիւնք, Վէճաբանութիւնք, Դիտութեանց և արհեստից վերաբերեալ յօդուածներ.— VIII) Պատասխանք.— IX) Յայտարարութիւններ զանազան լեզուներով։

Տարեկան բաժանորդագինն է 10 ռուբլի կիսամեայ 5 ռուբլի.

Գոռոզ և գոռն հասցնելու ծախքը խմբագրութեան վերայ է։

Ստորագրվել կարելի է Թիֆլիսում. I) Խմբագրատանը.— II) պ. Բ. Շահվերդովի գործակալութիւնում.— III) Զ. Գրիգորեանի գրախանութում.— IV) պ. Ց. Շահինեանցի խանութում։

Ծանօթութիւն։ Առաջիկայ տարին «Մեղուն» կը նրատարակվի երեք կամ չորս անգամ, եթէ դիւրութիւն միջոցները կը ներեն։

Կիւրակէ 16-ին դեկտեմբերի

Թիֆլիզի Ժողովարանի դահլիճում

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

միջոցները ընդարձակելու համար կը տրվի

ՊԱՐԱՀԱՆԴԷՍ-ԵՐԵԿՈՅԹ

Տոմսակներ մուտքի համար կարելի է նստանալ Ծատուրովի խանութում. իսկ պարահանդէսի երեկոյեան Ժողովարանի դրան մօտ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

Մի ազգ երևոյթ։ — Մեր գործողները։

Ներքին Տեսութիւն.— Թղթակցութիւններ Աստրախանից, Կարսից, Աղէքսանդրօպոլից և Թիֆլիսից։

Քաղաքական։ — Քաղաքական լուրեր.

Մանր լուրեր։

Յայտարարութիւններ։

Բանասիրական.—Գինեգն.— Թղթակցութիւն Նուխիից.— Ֆէլիէտօն։

ԹԻՖԼԻՍ, 13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1884 Թ.

Մեր անցեալ յօդուածով ցաւ յայտնեցինք, որ մեր մէջ ներկայումս գործունէութեան մէջ շատ անգամ ազնիւ համարձակութեան փոխարէն յանդգնութիւնն ու ժպրհութիւնն է բռնում և խելքի փոխարէն ճարպիկութիւնը, որով և մեր գործերն անյաջողութեան են միշտ հանդիպում, որովհետև ազնիւ խոհեմ և հարկաւոր դէպքում համարձակ գործիչների փոխարէն, նոցա տեղը բռնել են ձգտում ճարպիկ յանդուգները։ Եւ այսպիսիք իրանց դիրքը ամրացնելու և իրանց գործը յաջողեցնելու համար, աշխատում են արժանաւորների և ամօթ ու պատկառանք ունեցողների վարկը վայր գցել, որպէս զի նոքա իրանց անձնաւորութեամբ, իրանց արժանաւորութեամբ բաղդ չը լինին նոցա դէմ մեծ մասամբ խելքն աչքում ունեցող ժողովրդեան առաջ։ Եւ այս ախտով վարակված են ներկայումս մինչև իսկ շատ եկեղեցականք։ Որքան կը տեսնենք այսպիսի օրինակներ, եթէ մեր մեծ և փոքր վանքերի վերայ և նոցա մէջ գործող եկեղեցականաց վերայ ուշք դարձնենք։ Շատ տեղ տեսնում ենք լաւերի հալածումն, անուանարկութիւնք կամ կամաւոր աքսորքը որպէս զի ի պայքար չը մտին անարժանների հետ և կամ պատուով մեռնին չ'ընկնելով անպատկառ և յանդուգն պաշտօնակիցների հետ։

Կարելի է այսօր մեր մէջ գտնել այնպիսի անարժան եկեղեցականներ, որոնք անտեսութեան մէջ խարդախ՝ գինիների կարասները ջրի կարաս փոխողներ, փոխանակ լատ Փրկչի հակառակը գործելու, պանիրների կարասները ջրով լցնող և երեսին մի քանի կաւոր պանիր լոգացնելով վանքի վարչութիւնը խաբող են. սրբազաններ կան, որոնք շատ տգէտ քահանաներով մեր եկեղեցիքն լցրին, հայ եկեղեցուց ժողովուրդը սառեցրին և այլ այսպիսի անարժան գործերով զարդարված և ճնշողակար անձինք կան, որոնք այսօր ծրդում են զեր խաղալ, իրանց չարութեան առարկայ անելով, յանդգնութեամբ, եկեղեցի, ժողովուրդ, սոցա շահերը իրանց խաղալիկ համարելով։

Կան և այնպիսիք, որոնք 10—15 տարի քրիստոնէական ամենանհրաժեշտ պարտքն անգամ կատարած չեն, ոչ պատարագած և ոչ հաղորդված են, ի չար օրինակ առող սերնդի և այսօր բարձր պաշտօնների են ձգտում։ Ցաւալին այն է, որ այդպիսիախափշիկները, ուրիշների երես սեւացնել են ձգտում հրապարակական հանդէսներն են դուրս գալիս, յանդուգն ու ժպիրհ մանկան համարձակութեամբ։

Այս ամենայն չարիք մտանեն ի միտս մարդոյ յանուսումնութենէ, կոյր զրկի ի ճառագայթից արեգական, իսկ տգիտութիւնն զրկի ի կատարեալ կենաց, ասում է մեր երանելին Եղիշէ։ Եթէ այսօր մենք բարբարոսէս խեղճ վիճակի մէջ ենք, այդ մեծ մասամբ վերաբերելի է մեր ժողովրդի մեծամասնութեան տգիտութեան, որով նորա խելքը աչքուն է ու ականջում և ոչ գլխում։ Որովհետև դրանով միայն զանազան անձինք լինին նոքա եկեղեցականք, կարողանում են հանդէս գալ յանդգնութեամբ և միամիտ ու մաւուրապէս կոյր ժողովրդեան աչքում թոզ փչել, խաբել նրան։ Իսկ լաւերը, թէ և մեծամասնութիւն են կազմում, համեստութիւնն իրանց պարտ համարելով, տեղի տուր «չարեացս»-ին հետևելով և իրանց եղբարց առականքը ծածկելու համար լռում են։

Մենք կարծում ենք, որ մեր հոգևոր բարձրագոյն իշխանութիւնն ու վարչութիւնը, չը պէտք է չափազանց ներողամտութեամբ վերաբերվին դէպի այդ իւրեանց փոքրաթիւ անարժաններն, որպէս զի նոքա չը վարակին և այլոց, այլ նրանց զատեն և հեռացնեն գործերից և այլոց հետ մասնակցութիւնից, որովհետև այդպիսեաց արատքին յաջողութիւնը կարող է թունաւորել ամբողջ ազգ սերունդն բարոյապէս. եկեղեցական վարչութեան վերայ պարտք կայ ընդհանուրի բարոյականն ու առողջութիւնը բարձր դասել մի քանի վատերի բարօրութիւնից։

Եթէ մի հարեւանցի ակնարկ ձրգենք մեր հասարակական կեանքի այժմեան դրութեան վերայ՝ կը նկատենք, որ յառաջ շարժուելու տեղ՝ յետ ու յետ ենք գնում։ Աչքի առաջ բերենք մեր կեանքի մի փոքրիկ շրջանը շատ մօտիկ անցեալում. որքան եռուն էր նա։ Որքան յառաջադիմական շարժումներ էին երևում ոչ միայն Թիֆլիսում, այլ մինչև անգամ յետ ընկած գաւառներում։ Այդ ժամանակամիջոցում, որ տարաբաղդաբար չորս հինգ տարի միայն տևեց, ծնունդ և սնունդ առան հայոց մի քանի ընկերութիւնները՝ Բարեգործականը, Գրքասէրաց հրատարակութեանն և Հայասիրաց. այդ ժամանակամիջոցումը փայլեց Թիֆլիսի հայոց թատրոնը, կոչվեցաւ Հայոց ընդհանուր ուսուցչական ժողովը, կատարուեցաւ «Մեղուի» քսանեհինգամեայ յոբելեանը, և այլն և այլն։ Դոյն այդ ժամանակամիջոցում մեր ունեցած առաջնակարգ գրիչներն աւելի էին երևում մամուլի մէջ իրանց աշխատութիւններով.

Իսկ այժմ... աչքի առաջ բերելով այդ մերձաւոր անցեալը՝ կարելի է ասել, որ ամեն բանի մէջ տիրում է սառնութիւն ու անտարբերութիւն. ամենայն ինչ ընդարմացած դրութեան մէջ է և կենսաշարժ ոչինչ չը կայ։

Ո՞ր պէտք է որոնել այս տեսակ անմիխիթար դրութեան պատճառները։

Մեզ կ'ասեն, թէ այդ պատճառները մեզանից անկախ են, թէ արտաքին անյաջող հանգամանքների մէջ պէտք է փնտրել նոցա։

Արդարև, երբ վերջացան արտաքուստ պատահաբար ծնած այն հանգամանքներն, որ ոգևորութիւն էին ներշնչում մեզ և որ բարեպատեհ էին յառաջադիմական իդէների իրագործման համար. երբ դադարեցաւ պատերազմական գործողութեանց ժամանակաւոր ծփանքը, որ մեր կեանքին էլ մի ցինց էր տուել, երբ վերջապէս վատթարացաւ հայ ժողովրդի նիւթական վիճակն էլ, որ առ ժամանակ մի արտասովոր յաջողութիւն էր ստացել, երբ այլ ևս չը քացան այս բարեյաջող հանգամանքները՝ բնական է, որ մի ընդհանուր թմրութիւն զար տիրէր մեր հասարակական կեանքին և սրտաթափ անէր եռանդուն ոգիները։ Այս ամենը ճշմարիտ է այո՛։

Սակայն անուրանալի է և այն, որ մեր հասարակական գործիչներն էլ չեն կարող անպարտ համարուել, իբր թէ կաշկանդուած են ամեն տեսակ ձախող պարագաներով, և իբր թէ արդի քնէած դանդաղութեան բոլոր պատճառներն արտաքին են միայն։

Ընդհակառակն շատ օրինակներով կարելի է ապացուցանել, որ մեր հասարակական գործերի թմրութեան պատճառը նա՛ և այդ գործերին դեկավարձանաչուած անձանց կեղծութիւնն ու անտարբերութիւնն է։ Ի՞նչ արդեօք կայ, օրինակ, որ մեր «Գրականց Հրատարակութեան ընկերութիւնը» որ և է գործով իւր գոյութիւնը լսելի անէ հասարակութեանը, կեանքի նշաններ ցոյց տայ. գոնէ յայտնի լինէր, թէ ո՞յք են այդ ընկերութեան մդիչները. խմբագրական ժողով ունի՞, չ'ունի՞, և ո՞յք են անդամներն, և ի՞նչ հոգս են առնում արժանաւոր հրատարակութեանց համար, կամ ի՞նչ դրութեան մէջ է ընկերութեան գանձարանը։ Դարձեալ՝ անհնա՞ր է միթէ, որ ջանք ու եռանդ գործ դրուէին «Բարեգործական ընկերութեան» միջոցները զօրացնելու և գործունէութիւնն ընդարձակելու համար՝ առանց տարաձայնութիւններով ուժասպառ լինելու։ Եւ դարձեալ՝ ո՞վ կը խափանէ մեր կարող գրիչներին խմբուիլ գործակցելու եղած հրատարակութեանցը կամ ստեղծել նորերը, որչափ հանգամանքները կը ներեն։ Իսկ գաւառներում ցրուած լուսաւորեալ հայ երիտասարդներին ի՞նչը կը խափանէ մի փոքր ժամանակ զոհել իմաստ ու շնորհք ունեցող թղթակցութեանց համար, փոխանակ թոյլ տալու, որ համբակ գրչակները տաղտկացնեն պարբերական մամուլը, զեղով իրանց անիւթ ու անհիւթ գրուածները խմբագրատանց մէջ։

Զէ՛, եթէ ընդունում ենք, որ յիրաւի ներկայումս մեր հասարակական կեանքը դանդաղ է՝ պէտք է չը ժխտենք, որ այդպիսի դանդաղութեան գլխաւոր պատճառը մեր գործողների անգոսնելի անտարբերութիւնն է և յաճախ գաղափարների ու ձգտանց կեղծութիւնը։

Այս հարեւանցի ակնարկը ձգելով մեր այժմեան հասարակական գործերի ընթացքի վերայ՝ մեզ ներում ենք Ռուսիոյ Հայոց լուսամիտ դասի ուշադրութիւնը հրաւիրել առ այս, յիշեցնելով, որ պատիւ չէ նորան միշտ թռուցիկ զգածութեանց դրդմամբ միայն ոգևորուիլ, աղմկել՝ և ապա շուտով նորէն անտարբերութեան մէջ փետանալ մնալ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՍՏՐԱԽԱՆ

10 Նոյեմբերի.

Մեր մամուլը երբեմն շատ եռանդով վերաբերուեց քահանաների ապրուստի խնդրին։ Այս մասին շատ թուղթ ու թանաք գործադրվեց, վճիռ և ժողով կազմուեց, բայց հրապարակից գանդատը վերցնել չը յաջողվեց։ Ըստ որում մեր ազգի մէջ հազարաւոր հոգևորականներ կանոնաւոր ռոճկով՝ կամաւոր տուրքերի միջոցով պահպանելն, եթէ չ'անենք անհնարին, գէթ շատ դժուարին է։ Ցիշում ենք, որ «Մեղուն» այդ խնդիրն արծարծուած միջ միչտ այս կարծքի է եղել, քահանայից թիւն չափաւորել և ծուխերն հաւասարել. դեռ երկար ժամանակ այս հնարներից առաւել զօրեղ միջոց չ'ունինք։ Այս պատճառով սրբազան սինոդի վճիռն՝ հոգևորականների թիւն չափաւորելու մասին, այնքան գովութեամբ և շնորհակալութեամբ ընդունեաց։

Մեք սովորած ենք մեծ սրտանի մարդու նման, թեթև անբաւականութեան ժամանակ մեծ քարին վազել, որ կը ընչանակէ թէ՝ հարուածելու միտք չ'ունինք, ըստ որում վերցնել չենք կարող. հապա բոլոր գրածների, ժողովների և վճիռների ծայրը կը հատնի իրրև ընդհանուր գործ և մեծ կարեորութիւն բարձրացոյն հոգեոր իշխանութեան, որ իւր կողմից նոյնպէս կամաւոր ողորմութեան վերայ դնելով իւր հաստատութիւնների պահպանութեան յոյսն, եկեղեցիների և դպրոցների գոյութիւնը, կը ապայ իւր իրաւացի լակոնական պատասխանը. «քահանայից ինչ տեղից ռոճիկ սահմանեմ, ի կալէ թէ ի հնձանէ»։ Ուրեմն և երկարդ կարգի գործողների լեզուն դարձեալ երկար կը մնայ, որպէս թէ իրենց առաջարկութիւնն պատշաճաւոր յարգանք չէ գտնում։

Այս մասին Ատրպատականի յարգելի ժողովուրդն այլ ճանապարհի ունի բռնած քանի տարիներ յառաջ։ Երբ տեսել է որ քահանայից թիւն օր ըստ օրէ աճելու վերայ է, հասարակական վճիռ է կայացել, տասնից աւելի երեց չ'ունենալ։ Այս որոշումը Սինոդին է ուղարկել, որը և նա վաւերացրել է։ Այժմս քաղաքումս կայ 12 քահանայ, որոնց երկուսն ծերութեան պատճառով սրբազնագործութիւնից դադարած են, մնացորդն էլ ժողովրդականք բաւական, իսկ իսկ հոգեորականք անբաւական են։ Ինչու, ասա հարցը գրանումն է։ Յարակայս չը կայ, ինչպէս ծիսականների դասակարգից, նոյնպէս և երէցների վնասմանն կամայականութիւններ, որոնցից յառաջ են գալիս զրկանք։ Երբ որոշ ռոճիկ չը կայ, կը նշանակէ իւրաքանչիւր քահանայի ցուցակի ժողովուրդն իւր ապրուստն է, նրան դիպչել չէ կարելի։ Եթէ իրաւացի պատճառ կայ մէկի համար իւր ծխականէն փոխելու, պէտք է քննութեամբ և իշխանութեան հաստատութեամբ լինի. ապա թէ ոչ այդ զրկանք է և կարող է յառաջ բերել շատ անախորժութիւններ։

Մօտերումս այսպիսի մէկ դէպք է տեղի ունենում։ Քաղաքիս քահանաներից մինը միւսի ժողովրդի օրինակատարութիւնն է անում և արդիւնքն ստանում, զրկուածն բնաւոր սրտունջ է յայտնում բարեկարգին, իսկ սա վիճակիս կուռավարչին։ Դոյն օրն երկու, զրկուած և զրկող, տէրտէրներն առեան են կանչվում և ստայուած արդիւնքի երկպառակը յետ ստայուելով յանձնվում է գանդատաւորին։ Այս կարգը եթէ մշտատև պահպանուի, տարակոյս չը կայ, որ ծխականաց շատ կամ սակաւ արդիւնքը պաշտօնի ծանրութիւն տանող ամենանձինք հաւասարապէս կը վայելեն, և ոչ աւելի կամ պակաս։ Իսկ իրաւացի ուրիշներով բողոքաւոր օրինաւորներն ոչ միայն իրաւունք կ'ունենան իրենց յանկացած քահանային ժողովուրդ լինել, այլ և ուղղութեան և դատաստանի պատճառ կը դառնան իրենց նախորդ ծխատիրոջ։ Ուստի և այլ մեծ անյարմարութիւններն իրենց լուծումն կ'ստանան այն երջանիկ ժամանակն միայն, երբ ժողովրդականաց և հոգեորականաց դատակարգերն իրենց մէջ ապատաւելիք վերանորոգութեան ցանկալի կէտին ատրճանարար կը մերձենան։ Այս է բնական ճանապարհն, այլ միւս արհեստական միջոցներն տեսական չեն կարող լինել։

Հոգեորականաց դատն ես անտարբեր չէ Ատրպատականում, մօտերումս բարեկարգիչ արժանապատիւ Բունիաթեանց Յովսէփ աւագ քահանայն գրաւոր լուծումն ստացաւ սրբազան առաջնորդից հոգեորականաց ամսական ժողովներ կազմել, ուր պէտք է քննուին ըստ մեծի մասին տէրտէրների անհրաժեշտ պարտքերն, ժողովրդի կրօնական պարտականութեանց մէջ զանցառութիւններն և իրաքանչիւր երէցի արդար իրաւունքներն, եկեղեցական կամ ծխական եկամուտների մասին, որոնք ձայների բազմութեամբ պէտք է բաւականութիւն ստանան և զրկանքներ տեղի չ'ունենան. զրկանքներ, ինչ տեղից յառաջանում են առաւելապէս և հոգեորականների բարձրը նշանակութեան անարգութիւնը։

***

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՆԵԳԵՒ.

(ԶՈՐՍ ՕՐՈՒԱՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ)

ՕՐ ԵՐԲՈՐԴ—ՄԱՍՆ ԵՐԲՈՐԴ

ԶԶ.

Գիշերը ընկերների մօտ անցկացնելով՝ Լեոն Անթառեանը առաւօտուն գնաց հիւպատոսարան։ Այնտեղ նա իւր կողմից երկու պարտամուրհակ գրել տուեց։ Առաջինով՝ Ախալցխացի Լեոն Անթառեանը պարտաւոր էր, յընթացս երկու տարուայ, վճարել Հնձացի տիկին Եսթեր Մարտիրոսեան տէր Պետրոսեանցին, կամ ըստ նրա հրամանին, երկու հազար ռուբլի։ Իսկ երկրորդ պարտամուրհակաւ նա ինքը դարձեալ, և մի և նոյն ժամանակամիջոցում, վճարելու էր Էրզուրումի տիկերիչների փոխատու իշնայոգական գանձարանին չորս հազար ռուբլի։ Հիւպատոսարանում Անթառեանի կողմից մի կտակ ևս գրեցին։ Կտակի զօրութեամբ վերոյիշեալ գանձարանի վարչութիւնը յիշեալ չորս հազար ռուբլին Լեոն Անթառեանի կողմից նաէր էր ստանում այն պայմանաւ, որ գումարը անձեռնմխելի մնայ։ Իսկ նրա տկսիքով, տիկերիչ դասակարգի աղքատ ընտանեաց աղջիկ զաւակներին մարդու գնալիս, օժիտ պատրաստուելանուն և ի յիշատակ տիկերիչ Խաչօյի գերդաստանին։

— Առաջին պարտամուրհակի 2000 ռուբլին երիտասարդ Անթառեանի կողմից տուկ նուէր էր տիկին Եսթերին կամ նրա ապագայ զաւակներին։ Իսկ երկրորդ մուրհակի փոխն տիկերիչ Խաչօյի իրան սեպհականութիւնն էր ըստ հետևեալ հաշուոյ, որ Լեոնը ստուգել էր։ Առաջին՝ տիկերչու տան արժէքն, որ Գրիգոր աղա Անթառեանը անիրաւութեամբ իրան էր սեպհականացրել 2000 ռուբլի։ Երկրորդ՝ Քեօփրի-Քեօյի եկեղեցւոյն ամանաթ արծաթների արժէքն 400 ռուբլի։ Երրորդ՝ ընկերովի խանթի մնացորդ ակնեղէնների տիկերչու բաժնի արժէքն 300 ռուբլի։ Վերջապէս չորրորդ՝ վերջին անգամ տիկերչուն Կ. Պոլսից, իւր սեպհական փողովն և յատուկ իւր ընտանեաց համար, բերած մի հակ ճոթեղէնի, (որ նոյնպէս յափշտակել էր Գրիգոր աղան) արժէքն 300 ռուբլի։ Բոլորը անում է 3000 ռուբլի։

Այս գումարի մի քանի տարվայ տոկոսն ևս 1000 ռուբլի վրայ գալով, ընդամենը անում է 4000 ռուբլի։

Հիւպատոսարանի կնքով վաւերացած ինքնատոմարագիր թղթերն գրպանը դնելով Լեոն Անթառեանը այնուհետև Մամբրէ եպիսկոպոսին ներկայացաւ։ Այնտեղ երիտասարդը ինքն իրան ծանօթացրեց Կարնոյ առաջնորդին։ Խոստովանեցաւ և պատմեց նրան ամենը բան։ Ի վերջոյ եպիսկոպոսի օրհնութիւնը ստանալով մեկնեցաւ, խնդրելով ոչ որին ոչինչ չ'ասել առ այժմ, մինչև որ ինքը ս. Կարապետից վերադառնալով՝ իւր հայրենիքը, Ախալցխայ, կը հասնի։

Մինչև աղայի երեսն անգամ չուզեց տեսնել երիտասարդը, ոչ այդ, և ոչ էլ հետևեալ օրերում։ Եւ իւր այդ պարմանքը ոչ այնքան ընկերների, որքան անձեր որդւոյն, Արշակին առաջ արդարացնելու համար, Լեոնը յայտնեց թէ իւր ազգականը քանի տարուց ի վեր իրր թէ Սեբաստիա է փոխադրուել։

ԶԻ.

Նշանակեալ ժամին երիտասարդը արդէն վարպետի խանութումն էր։ Այնտեղից Խաչօյի հետ նա գնաց Մարխանոնին տեսութեան։

Դիվան-եօլի փողոցը մանելիս՝ Լեոնի աչքի առաջ, մի բոպէում, հանդէպ Լեան այն ամենն տխուր և ուրախ անցքերն, որոց երիտասարդը ականատես ու վկայ էր եղած մի ժամանակ։ Փողոցի ամենն մի զու�ը, քարը, կոչտը այլ և այլ զգացմունքներ և մտքեր էին զարթացնում երիտասարդի սրտումն ու գլխումը։

Խաչօյի զուան հասան։ Լեոնին թուում էր, թէ այդ զուան առաջ, մինչ օրս, վեր ընկած կենում է ծեփի այն կոչտը, որ բարաւորից վեր ընկաւ, երբ Արեգնազան խանումը, ուժով յետ խլեց տիկերչու զուռը։ Ամեն բանը։ Այդ տեղ էլ երիտասարդը երևակայեց այն ժամը, երբ ինքը Եսթերին հետ կուռ կռան տուած՝ մի կողմից ուշադնաց Մարխանոնին տուն ներս տանել էին ուխտաւորում և միւս կողմից հարևան կանանց լով՝ իւր հայրենիքը, Ախալցխայ, կը հասնի։

Մինչև աղայի երեսն անգամ չուզեց տեսնել երիտասարդը, ոչ այդ, և ոչ էլ հետևեալ օրերում։ Եւ իւր այդ պարմանքը ոչ այնքան ընկերների, որքան անձեր որդւոյն, Արշակին առաջ արդարացնելու համար, Լեոնը յայտնեց թէ իւր ազգականը քանի տարուց ի վեր իրր թէ Սեբաստիա է փոխադրուել։

ԶԻ.

Նշանակեալ ժամին երիտասարդը արդէն վարպետի խանութումն էր։ Այնտեղից Խաչօյի հետ նա գնաց Մարխանոնին տեսութեան։

Դիվան-եօլի փողոցը մանելիս՝ Լեոնի աչքի առաջ, մի բոպէում, հանդէպ Լեան այն ամենն տխուր և ուրախ անցքերն, որոց երիտասարդը ականատես ու վկայ էր եղած մի ժամանակ։ Փողոցի ամենն մի զուռը, քարը, կոչտը այլ և այլ զգացմունքներ և մտքեր էին զարթացնում երիտասարդի սրտումն ու գլխումը։

Խաչօյի զուան հասան։ Լեոնին թուում էր, թէ այդ զուան առաջ, մինչ օրս, վեր ընկած կենում է ծեփի այն կոչտը, որ բարաւորից վեր ընկաւ, երբ Արեգնազան խանումը, ուժով յետ խլեց տիկերչու զուռը։ Ամեն բանը։ Այդ տեղ էլ երիտասարդը երևակայեց այն ժամը, երբ ինքը Եսթերին հետ կուռ կռան տուած՝ մի կողմից ուշադնաց Մարխանոնին տուն ներս տանել էին ուխտաւորում և միւս կողմից հարևան կանանց

ԿԱՐՍ

12 Նոյեմբերի.

Կարսի ս. Լուսաւորչեան վարժարանի գրադարանի վարչութիւնը ստացաւ նուէր «Մեղու Հայաստանի» պատուական լրագրի մեծապատիւ խմբագրից, պ. Գր. Երզնկեանցի ձեռամբ, հետևեալ գրքերը.—

Լրնէա Բէօմէի մանկավարժական նամակները, 2 օրինակ։ Երկու մանրավէպ, մի օրինակ։ Պօղոսի ուսուցչի օրագրից, 7 օրինակ։ Սոխակ և խոզարած, 4 օրինակ։ Իս էլ իմ սաղը, 1 օրինակ։ Ոսկի աքաղաղ, 1 օրինակ։ Աշխարհագրութիւն Հայաստանի, 1 օրինակ։ Արարատեան ընկերութիւն, 1 օրինակ։ Աշտանի ընտանիքը, 2 օրինակ և Գնար խօսնակ, 1 օրինակ։

Նոյնպէս և նոյն գրադարանի վարչութիւնը ստացաւ նուէր մեծապատիւ լուսանկար Մ. Մուշեղեանցից Կարսի զանազան մասերի նկարը պարունակող մեծագիր հօմն հատ զեղեցիկ պատկերներ։

Վարչութեան հրապարակական ջնորհակալութիւնը յիշեալ նուիրատու պարոնայց յայտնելու համար, խմբագրապետ ՑԷր, հաճեցէք սոյն երկտողը զետեղել «Մեղուի» համարներից մէկում։

Վարչութեան կողմից՝

Մարտիրոս Պօղոսեան.

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼ

Ցարգոյ խմբագիր։ Երբ գործը ընդհանրութեանն է վերաբերում, վնաս չ'ունի եթէ մի քանի անգամ գրուի և հարցը լաւ պարզուի։ «Նոր-Դարի» 142 համարում պ. Կ. Յ. մի գովասանական յօդուած բաց թողեց Եկեղեաբարցի ուսուցիչ Մելքիսեդեկ Հալաճեանցի նորակառոյց կենդրոնական դպրոցի մասին և յորդորեց ՅՈՎՈՎՐԴԻՆ օգնել յիշեալ վարժարանին և նրա դպրոցին տարեկան թոշակ նշանակել։

Դարձեալ «Նոր-Դարի» մէջ Շիրակեցի ստորագրութեամբ (№ 149) հերքեց պ. Կ. Յ.-ի յօդուածը և ցոյց տուեց, որ յիշեալ վարժարանի դպրոցին օգնելը անտեղի է, որովհետև պ. Հալաճեանցը իրա համար մասնաւոր տուն է շինել և այդ տան մէջ երեխաներ է կարգացնում, մի խօսքով այդ տունը ազգի սեպհականութիւն չէ։ Սրան վկայեց «Մեղուի» 74 համարում «Ալէքսանդրօպոլցու» թղթակցութիւնը։

Սրանից յետոյ «Նոր-Դարում»-ում Ալէքսանդրօպոլցի մի թղթակցութիւն էլ դուրս եկաւ, որ վկայում էր Հալաճեանցի խարերայութեան մասին։ Ուրեմն երեք թղթակիցներ վկայեցին, որ Հալաճեանցը իրա համար մասնաւոր տուն է շինել և ոչ թէ հասարակութեան համար դպրոց։ Մեզ հետ շատերը անհամբեր սպասում են պ. Մելքիսեդեկ Հալաճեանցի կարճ պատասխանին. այնինչ նոր շինած տունը հասարակութեան է. նէ նրա՞ սեպհականութեան։ Եթէ հասարակութեան սեպհականութիւն է, թող հալալ լինի իրան այն փողերը և դրքերը, որ յանուն դպրոցի հաւաքել է, իսկ եթէ իւր սեպհականութիւնն է, ապնութիւնը պահանջում է հաչիւ տալ իւր ժողովարարութեան մասին և ժողոված դրամները յանձնել ազգային դպրոցներից մինին։ Եթէ պ. Հալաճեանցը այս նամակիս էլ չի պատասխանիլ, այն ժամանակ ես նրա բոլոր գործերը հրապարակաւ կ'ասեմ։ Անհամբեր սպասումենք Հալաճեանցի պատասխանին։

Ալէքսանդրօպոլցի։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Պարոն խմբագիր։

Պ. Սեյաղ Ամիրեանը «Մեղուի» 75 համարում մի ինչ որ «նորածին» ընկերութեան (ինչպէս ինքն է ասում) 60 ռ. մօտ ունեցած դրամագլխի համար հաչիւ էր պահանջել, մինչդայն ժամանակ պարտաղանց համարելով լուելու մասին այն անձանց, որոնց անունները իրրև անդամներին չարել էր նա իւր յօդուածում։

Այդ նամակը մեզ բաւական զարմացրեց։ Կարդացողը կարող էր՝ նրա նկարագրած ընկերութիւնը՝ մի չատ նշանաւոր բան հասկանալ։ Զարմանալիութիւններ հարկաւոր չեն, եթէ պ. Ամիրեանի յիշած անձինքը մի բան արել են, այդ էլ եղել է, այն, որ նոքա բարեկամաբար մի քանի գիշեր հաւաքուել են միմեանց մօտ և խորհուրդ են արել այն մասին թէ կարելի էր արդեօք կազմել մի ընկերութիւն, որը ձեռնհաս լինէր օգնելու չքաւոր երեխաներին արհեստանոցներ տալու. այդ մասին կազմել ենք մի ծրագիր. բայց և այնպէս զգալով մի և նոյն ժամանակ մեր անկարողութիւնը նրան լի կատար ածելու. մենք թողել ենք նրան մի աւելի յարմար ժամանակի. երբ կարելի էր այդ ծրագիրը յանձնել աւելի կարող անձինքների ուշադրութեան։

Եւ այդպէս, քանի որ մեր արածը լոկ մի փորձ էր, քանի որ այդպիսի մի ընկերութիւն դեռ հաստատուած չէր կանավարութիւնից. հետևապէս նա դրամագլուխ էլ ունենալ չէր կարող. և իսկապէս չի էլ եղել։ Առաջին անդամ ժողոված ժամանակներս իսկ, առաջին խօսքերնիս եղել է, որ ոչ մէկը մեզնից, մինչ հաստատութիւն չ'ունի ընկերութիւնը, իրաւունք չ'ունենայ կօպէկ անդամ հաւաքելու։

Ոչ ոք մեզնից փող չէ հաւաքած. կրկնումենք մենք, ոչ ոք մեզնից փող չէ «յանձնած» պ. Արգիսբէկեանին. իսկ եթէ որ և է մի Ս..եան խոստացել է իւր մօտ եղած հին ժամանակից մնացած չը գիտեմ ինչ 50 թէ. 60 ռ. ընկերութեանը տալ, երբ նա հաստատութիւն կ'ստանայ, այդ չէ նշանակում թէ ընկերութիւնը 60 ռ. դրամագլուխ ունէր և յանձնեց այս ինչ մարդուն խոստումը փող չէ. պ. Ս... խոստացել էր տալ. և չը տուեց և շատ իրաւամբ քանի որ ոչինչ հաստատ բան չը կար. ուրեմն ասացէք խնդրեմ ինչ հարկ կար այդտեղ պ. Ամիրեանին, որին այդ բանը չատ լաւ յայտնի է, հաչիւ պահանջելու և զանազան անտեղի նկատողութիւններ անելու։

Չեմ կարծում, որ «Մեղուի» խմբագ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

«Ռուս. ընկ.» 1150 ռ. դրամագլխով ընկել օր. դպրոցի չինութիւնը, յիշեալ ընկերութիւն յղացող և հիմնադիր Գրիգորիս հայր սուրբը իւր մի յօդուածով «Մեղուիզ» մէջ, բողոքեց այս անկանոն ձեռնարկութեան համար։ Հայր սուրբը պնդում էր իւր հիմնած ընկերութեան կանոնաւոր ընթացք տալ, այլապէս կարող են նուիրատու հիմնադիր անդամների զայրոյթը շարժել։

Թէ և հայր սուրբի գրուածը որ և է ազդեցութիւն չունեցաւ գործող անձանց վերայ, դա բաւական չէր, հանդէս եկաւ մի պարոն «Մանուչարեանց» սատարութեամբ և սկսեց հայր Գրիգորիսի գրութեան միտքը յեղաշրջել ուզածին պէս, առանց խորը թափանցելու բուն խնդրոյ մէջ, և յարգելի անդամոց կողմից երաչխաւոր հանդիսանալ։

Այս պարոնը վստահացաւ անգամ հայր Գրիգորիսին ասել «թոյլ տուէք որ այդ գժուարութեան համար «Ռուս. ընկ.» հիմնադիր անդամները մտածեն, ի հարկէ իրապէս, ինչպէս ահա կը տեսնենք։

Պ. Մանուչարեանցի այս անձնապատան յօդուածի դէմ մենք մի համեստ պատասխան գրեցինք, որոյ մէջ ցոյց տուինք այն ամենայն գժուարութիւնք, որոնք կը հանդիպին չինութեան ձեռնարկողները, (տես «Մեղու» № 45. խընդրում ենք պարոններին «խաթրի համար» կրկին անգամ կարդալ այս №-ը)։

Մենք կարծեցինք որ մեր գրածը գործող անձանց ուշադրութիւնը կը գրաւէ և մի որոշ ազդեցութիւն կ'ստանայ գործը։ Մեր յոյսը չ'իրագործուեցաւ։ Բայց թուք ու մուրը իրանց ականջովը լսում, Ցեռնելով տան միջին մասը, Անթառեանը, սոսկմամբ, մտաբերեց այն բոպէն, երբ իւր մայրը Եսթերի ծամերիցը քաշ տալով՝ հէնց այդ տեղումը գետին փռուեցրեց օրիորդին։ Վերջապէս տան սէրբիսն, ուր, մի երջանիկ գիշեր, Լեոնն ու Եսթերը, դէմ առ դէմ, նստած միմեանց հանելուկներ էին ասում։ Մարխանոնն էլ աչքերը չուտ չուտ դէպի կտրան լուսամուտը ցցելով, Ադամայ մթան կոխելուն էր սպասում։ Եւ այդ երջանիկ ժամերի գժրազդ հետանքը, փողոցի կանանց ու մանուկների սակերչու գուռն առաջ ու կողի վրայ խրտնուելը, պատաւ Օղիպայի ճիչ ու կանչը, երեսակայական հրդէհը,—ամէն բան, ամէն բան նոր նոր յիշատակ էր առաջ բերում և երիտասարդի սիրտը նոր նոր փոթորիկներով ալեկոծում։

(Կը շարունակվի).

ՆՈՒԽԻ

22 Նոյեմբ. 1884 թ.

Այս տարի երբ հայր Գարեգին Սաթունեանը ժողովներ կազմեց օրիորդական դպրոցի չինութեան համար, մի պարոն «Նոր-Դարի» չը գիտեմ որ համարում, զգուշացրեց թէ հայր սուրբին և թէ նուիրեցուց սկսելիք ծանր չինութեան դրամական հաչուի համար։

Որովհետև, հայր Գարեգինը և հրաւիրուած պարոնայք նուիրեցիք վճռեցին երբեմն Նուխում գոյութիւն ունեցող

բագրութիւնը իւր սիւնակներից մէկը մերժէր ճշմարտութիւնը պաշտպանելու համար։

Աբել Ադրէսեան.

21 Նոյեմբերի.
Թիֆլիս.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ.

Անհամաձայնութիւնը Ֆրանսիայի և Չինաստանի մէջ չէ վերանում։ Իրաւ է Մարկիզ Զէնդը արել էր լորդ Գրէնվիլլին իւր առաջարկութիւնը, միայն դոքա անիրագործելի են համարվել Ֆրանսիայի կողմից, որովհետև Չինաստանը պահանջում է, որ Տոնկինի մի քանի կետերը մնան Չինաստանի իշխանութեան ներքոյ։ Մարկիզ Զէնդը միաղօր իշխանութիւն ստացած է իւր կառավարութիւնից բանակցութեանց վերաբերութեամբ և հաւանական է, որ նա դեռ ևս շատ զիջողութիւնք անէ։ Չինաստանի յոյսը Ֆրանսիացւոց անկշանանյայջողութեանց վերայ է հիմնված, որ նոքա ունեցան և Ֆերրիի նախարարութեան ծանր դրութեան վերայ, իսկ այդ յոյսը յօդս ցնդվեցաւ, երբ Ֆրանսիայի պատգամաւորաց ժողովը հաւատարմութիւն և վստահութիւն յայտնեց Ֆերրիի նախարարութեան, տալով նրան պահանջած գումարը պատերազմի շարունակութեան համար։ Սորա վերայ աւելացնելու է և այն հանգամանքն, որ Անգլիան յայտնել է Չինաստանի կառավարութեան, որ Ֆրանսիան վճռել է զէնքի զօրութեամբ ձեռք բերել այն, ինչ որ նրան չը յաջողեցաւ դեսպանագիտութեան միջնորդութեամբ ստանալ, մանաւանդ ազդու կը լինեն Չինաստանի համար Ֆերրիի պատգամաւորաց ժողովում ասած խօսքերը՝ թէ «անցաւ բանակցութեանց ժամանակը, այժմ պէտք է գործել։» Ոչ պակաս ազդեցութիւն կ'ունենայ Չինաստանի վերայ անչուշտ և ապստամբութիւնը Կորէաում, որ նորա հպատակ երկիրներից մէկն է, ինչպէս և շարժողութիւնը Ճափոնացւոց մէջ։ Հաւանական է, որ այս հանգամանքները կ'ստիպեն Չինաստանի կառավարութիւնը զիջող գտանվելու և շտապել վերականգնելու խաղաղութիւնը Ֆրանսիայի հետ։

Գերմանիայի ներքին վիճակը նախանձելի չէ։ Ռիսմարկի համաձայնութիւնը պատգամաւորաց ժողովի մեծամասնութեան հետ, ներքին խաղաղութիւն չէ խոստանում երկրին, քանի որ կառավարութիւնը մտադիր չէ և չէ կարող իւր կշիռը կորցնելու երկիւղից, զինիել ժողովի մեծամասնութեան պահանջներին, որոնք հակառակ են կառավարութեան դիտաւորութեանց և ուղղութեան։

Սպանիայում վերջին ժամանակ ոստիկանութեան բռնութիւնը համալսարանի իրաւանց դէմ Մադրիտում մեծ վրդովմունք պատճառեց երկրում, ուր կուսակցութիւնք արդէն սկսել են ակնյայտնի կերպով ձայն բարձրացնել կառավարութեան դէմ, իսկ ապստամբութիւնք և խռովութիւնք այդ երկրում շատ շուտով են տեղի ունենում ի շնորհս ընակչաց դիւրագրգռութեան և զարգացման աստիճանի ստորութեան։

Իտալիայում Վատիկանի և Իտալիան կառավարութեան մէջ կատարեալ համաձայնութիւնը տեղի չէ ունենում և առաջինն ամէն միջոցներով գործում է ընդդէմ երկրորդին ի շնորհս եկեղեցականաց ազդեցութեան ժողովրդի չը զարգացած մասի վերայ։

Անգլիայում դիսմիսն իբրև իրլանդացւոց վրէժխնդրութեան գործիք շարունակում է իւր աւերիչ ազդեցութիւնը։

Աւստրիայում վաղուց արդէն շարունակվում են ներքին յուզմունքներն ի ի շնորհս ազգայնութեան գաղափարին և իւրաքանչիւր ազգի ձգման իրաւանց հաւասարութիւն և առանձին վարչութիւն ձեռք բերելու։

Այսպէս Եւրոպայի ոչ մի երկրի ներքին վիճակը խաղաղ չէ։ Որքան կառավարութիւնք աշխատում են խաղաղութեան հաստատութեան համար, այնքան նորա խանգարման համար կարծես պատրաստվում են ժողովրդոց մէջ տարրներ որոնք ժամանակով ինչ դեր կը խաղան և ինչ կ'առաջացնեն, յայտնի բան է դժար է գուշակել։ Միայն այսքան կարելի է ասել, որ նոքա չեն կարող առանց հետևանքի մնալ և գէթ այդ վրկիրների ներքին վիճակի փոփոխման վերայ ազդեցութիւն չը գործել։ Այս փոփոխութեանց եղանակն ու չափը ժամանակը միայն կարող է որոշել։

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Շնորհակալութեամբ ստացանք հետեւեալ նորատիպ գրքերն 1) Արսէն Հուսէի «Եւայի աղջկերքը» թարգ. Ա. Մատթեանի, Տֆիխս 1884. Գինն է 1 ռ. 2) Անդէրսէն. «Անդամալոյծ» մանկական վէպ. թարգմ. Գրիգոր Շահրուդաղեանց. Թիֆլիզ 1884. Գինն է 15 կոպէկ։

* * *

ԲԱԳՈՒԻՑ գրում են.—Սոյն ամսոյս 5-ին տեղի կունենայ Բագուի հասարակական կլուբի դահլիճում պարահանդէս և երաժշտա-դրամատական երեկոյթ յօգուտ դրամատիկական ակումբի ֆոնտի։

* * *

Ամսոյս 3-ին երեկոյեան սրբ. առաջնորդի հրամանով Տֆիխսի քահանայքը ժողովուած էին Առաջնորդարանում։ Այդ ժողովում առաջնորդը խօսեց երեք խնդիրների վերայ. ա) Շրջաբերականի երեսփոխաններ և պատգամաւորներ ընդրելու. բ) «Հրահանգի» և առհասարակ մի քանի հրամանների ճիշդ կատարմանց և գործադրութեանց մասին և գ) «Մատենադարան-ընթերցարան և ժողովարան» հիմնելու մի ծրագրի մասին Տֆիխսի հայ քահանայից համար։

Իւրաքանչիւրի վերայ էլ Առաջնորդը համառօտապէս խօսեց և բացատրեց նոցա նշանակութիւնը։ Շրջաբերականը, որ ինչպէս երևում էր, յոդուածներով էր կազմուած, նպատակ ունէր կարգ ու կանոնի տակ ձգել եկեղեցիների երեսփոխանական ընտրութիւնները։ Այս շրջաբերականով ընտրութեանց մասնակցելու իրաւունքից զրկվում են ժամառորները և ուսանողները, որոշելով որ իւրաքանչիւր ոք իւր յատկացրած եկեղեցին պիտի դնայ ընտրութեանց մասնակցելու։ Ընտրութեանց կարող են մասնակցել և նոյն եկեղեցւոյ միաբան քահանայքը և սոքա պիտի զեկավարեն բարեկարգիչների հետ միասին այդ ընտրութիւնները, հրաւիրեն ծխականներին ծանուցումներով և այլն։ Կազմվեցաւ մի մասնաժողով երեք հոգուց բաղկացած, որին քահանաները պիտի ներկայացնեն ծիսոց ցուցակները 1879-ի հաստատած ցուցակների համեմատ, որպէս զի սորանով կարելի լինի ստուգել ընտրութեանց մասնակցողների անձնատրութիւնքը։

Սրբազանը հրաւիրում էր քահանայից առ հասարակ պարտաճանաչ լինել և յարգել ազգային-եկեղեցական և կայսերական հանդէսները ներկայ գտնուելով այդ հանդէսներին Վանայ մայր եկեղեցում և ճշդիւ կատարել «հրահանգի» որոշումները։

«Տֆիխսի հայ քահանայից Մատենադարան-ընթերցարանի և ժողովարանի» ծրագիրն կազմել և առաջարկել էր Աշոտ քահանայ Թէմուրազեանցը, երկու կանոնագրութիւններով, մի կարևոր դրդիչ Տֆիխսի հայ քահանայից համար։ Քահանայքը մերժուած լինելով ժողովրդեան մատչելի հասարակական հիմնարկութիւններից, ինչպէս թատրոններ, կլուբներ և այլն, դրդարան անդամ չունին, որ ամենայարմար միջոց էր նոցա դրդմանց առարկայ տալու։ Շատ տրախալի է, որ որքազան առաջնորդը համակրութեամբ և ուրախութեամբ է ընդունած այդպիսի մի առաջարկութիւն և կարևոր ընթացք է տուել գործին։ Հարկաւոր է, որ և քահանայքը համակրութեամբ ընդունեն և մասնակցեն։

Ինչպէս տեղեկացած ենք, տէր-Աշոտը Մատենադարանի համար առաջարկում է 3 ճիւղ հաստատել, որոնցից գլխաւոր ճիւղը և Մատենադարան և ընթերցարան պիտի լինի բուն քաղաքում, երկրորդ ճիւղը Հաւլաբարում. իսկ երրորդ ճիւղը Կուսանաց մենաստանում. վերջին երկուսը պիտի ունենան միայն ընթերցարաններ, իսկ գրքեր կարող են ստանալ քաղաքի Մատենադարանից։ Իսկ ժողովարանը նպատակ ունի ամեն շաբաթ ժողովել քահանայից զանազան իրանց շրջանին վերաբերեալ խնդիրների մասին խորհրդածելու, ինչպէս քարոզների, ժողովրդեան մէջ տարածուած նախապաշարմունքների, քահանայից «խնայողական դանձարան» հիմնելու, նրանց բերան օրգան հիմնելու և այլն։

Տէր-Աշոտի այդ ծրագիրը առաջարկվեցաւ «Առաջնորդական յանձնաժողովին» ի քննութիւն։

* * *

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են.— Դեկտեմբերի 2-ին, տեղւոյս ս. Լուսաւորչայ մայր եկեղեցւում, ի ներկայութեան խուռն բազմութեան, բարեկարգիչ Տ. Տ. Գրիգոր քահանայ Միրզաբէգեանցը կէսօրուայ պատարագին կարդաց ս. սինոդի կարգադրութիւնը, բարձրագոյն կառավարութեան հրամանով, կաթուղիկոսական նոր ընտրութեան մասին, նա ևս—թեմական առաջնորդի հրամանը, որով նա պատուիրում է Բագուայ հայ հասարակութեան ընտրել իւր միջից երկու աշխարհական պատգամաւոր, որ գնայ Շամախի մի աշխարհական պատգամաւոր ընտրելու համար։ Կարդալուց յետոյ տէր հայրը մի քանի աղդու խօսքերով բացատրեց հայ ժողովրդեան դործած սխալը անցեալ ընտրութեանց ժամանակ և նախապէս զգուշացրեց, որ այս անգամ էլ չ'սխալուին—ընտրեն մի այնպիսի պատգաւոր, որ նա համապատասխան լինի նորա բուն նշանակութեանը, այսինքն նա լինի հաստատակամ, տակուն ընտրութեան և հաստատ համոզմանց տէր մարդ և հայ հասարակութեան շահերին անկեղծ սրտով նուի-

---

ոքան զարմանքով կարդացինք մենք նոյն Մանուչարեանցի անբովանդակ յօդուածը «Մեղուի» № 61. պարոնը մըտնում մինչև անգամ հոգաբարձական արխիւը, և գործից տեղեկութիւնք քաղելով ճշնում է իր ասածը առաջ տանել [1]։ Պարոն, այդ յօդուածների բովանդակութիւնը մենք վաղուց գիտենք, բայց որովհետև սխալ գործը մեծ գործ էր, կը յաջողուէր, չէր յաջողուի դեռ հարց էր, իսկ «Ռուս. ընկ.» արդէն գոյութիւն ունէր։ Այդ պատճառաւ մենք ցաւելով յայտնում էինք «տասը չափել և մէկ կարել», ի զուր ստիպում էք կրկնելու մեր ասածը։

«Ջաղացը աղունն է աղում, չանչախը իրա գլուխն է ծեծում» սա հարանց խօսք է, մեզ համար պարզ էր, որ եթէ այս անգամ էլ խօսելու լինենք, դարձեալ լսող չէր լինելու, ուստի լռեցինք։

Օրիորդական դպրոցի չինութիւնը առայժմ հասել է տանիքին, անհրաժեշտ է ծածկել, փողի բացակայութիւնից ստիպուած, չինութիւնը ծծում է վերջին անձրևների ջուրը։

Մեր ժողովուրդը կարողութեան չափ մասնակցել է չինութեան։ Հայր սուրբը ճարահատեալ այս օրերս մի տումար ձեռն, տներ, խանութներ, գործարաններ շրջելով մուրում է։ Մարդու ներ-կայանալիս հինգ անգամ «մատաղ քեզ խնդրում եմ» բառերով... ստորագրել

[1]) Մենք նոյնպէս ցանկանում ենք այդ արխիվում մի քանի գործեր քննութեան առնել. արդեօք թոյլ կը տան.

Հեղինակ.

խնդրում է, յարդ և պատիւ հայր սուրբին։ Մարդիկ ամաչում են, պատկառում են նրանից։ Իսկ պ. Մանուչարեանց, ոչ է և ոչ երեի—յայտ դէպս։ Բայց գործը կրթութեան տաճարին է վերաբերում, ինչու անտարբեր էք։

Ի դէպ Պ. Մանուչարեանցի վերջին յօդուածի մի քանի խօսքը մեզ համար մութն է, արդեօք ինչ է կամենում ասել, «Շատ անգամ իրաւունքները ոյժերի առաջ խոնարհում են»։

Մենք առաջարկում ենք պարոնին բացատրել վերև յիշած բառերի նշանակութիւնն և զօրութիւնը։

Նուխեցի.

ԳԱՅԱՌԱԿԱՆ

ՖԷԼԻԷՏՕՆ

Այս տարի մեր քաղաքի բանը բուրթ է. ամեն մարդու առ.քը պէլի կանէ, Հարուստ ու աղքատ ախ ու վախի մէջ ին, «վատակ չը կայ, արդիս կօրանք» կ'ասին։ Ամա թուղթ խաղալը կատղած է, մուղիքանթ Աբօլոնակին ալ աղէկ սօյէն կը տօղէ. մեր ախ ու վախ անող աղաների տամարները նա գտել է։ Երբ փունճը նոցա կոկորդը կը մտնէ, ճէպէրէն ացիկնացիները կը թռչին, օչապա չը» Աբօլոնակիին գոդը կ'ընկնին։ Կ'ցցէ թուղթը ու փունճը, ապրինք въ свое удовольствіе: играй поулицу Мостовой, бери сторублевую.

—

Այս տարի կռիւի տարի է. կօլօվա, կլուանի և այլն՝ ընտրելու ձմեռ է։ Փեսա, էմճէ, տայի եղնա թօփ թօփ եղած կլանի կ'ըլլան, ամեն պաշտօնները իրենց մարդացը տալ կուզին,—ամա՝ Բամբասարանցիք զօռլուին։

Մեր Մուրչանն [1]) ալ մուրատին հասաւ, վերջապէս կլանի եղաւ։ Բամբասարանին մէջ յաղթող է ելին, խեղճը թահմին կանէ քի տումային մէջն ալ՝ ան պիտի ըլայ,—անիսկ չիկէ քի, ձանը ելլածովը քիթին պիտի դարնին։ Անկից Ռօստովի մեծ խանութի տէրն ալ՝ կլասանի արին, դայիր նարամէն ալ խէլք պիտի հարցնուն։ Վայ քեզ քաղաք, որ Մուրչանի ու խցանի խելքերով քեզի պիտի կառավարին, և կամ Մերկեանով բան մէյտան պիտի բերին։

—

Քաղաքին տախօսը չատցիլ է. ամենքը աչք տնկիլին, որ իրենց փայ մը վրթին, ու չը-ռթ—փը-ռթ ասելով ճըպ-ուրթ անին։ Ամենին իշտահները բացուիլին, ժալօվնանները աւելցնել կուզին. մեծ գործ տեսած իրենք իրենց գիտին, անիսկ ամենն ալ թէմպել հանայի լայլա ին։ Դաղարները՝ սօխախները—քաղաքին չորս քովերը նայողը չը կայ, անոր համար, որ ynpaba ին մէջ Крылов лебедь, ракъ, щука առակն կայ։ ynpaba-ի մարդիկը մէկզմէկու միս կը ծամին, քաղաքի գործերն ալ երէսի վրայ ընկածին։ Полъ капьечній сборъ-ը մենք արինք կասին, անոր համար ալ մարդիք քօչա պուռմանները «մարդոցը наградъ տանք» կասին։ Ամենուն երաշները պաշտօններուն մէջ մնալ կուզայ. ժալօվնաներն ալ՝ երկու խաթ եղած կ'երևայ։ Վայ քեզ հայի քաղաք, որ քու դլխները, սալթը իրենց փօրերի բանը կը նային ու հայերուս հողերը, կալուածները, տունները չատով կորանցնելու վրայ ին։ Ամա որին կասիս. ուղնանը պօռաղանով անկոճներուն մէջը փչէ. նաքա հաղիրին խուլանալու, թէք հնարը գտնին ժալօվնաները աւելցնելու։ Կլանիներն ալ նայինք ինչ կանին. կախ անկաճներէն կը լան, չէնք արթուն կը գտնուին. պօշ ժամանակ կանցնուն, չէնք սրտացաւ ու ճշմարիտ մարդոց խաթը կը դիտնան։

—

Մեր վարժատուններուն բաներն ալ խիստ խաւճուռ բան է. ամենն ալ գիտնական եղիլին ու մատերուն վրան կը խաղցնին, հէմ տեսուչներուն, հէմ վարժապետներուն, հէմ աշկերտներուն ու հէմ միամիտներուն։

—

Մեր Սիւլիկին ալ՝ կ'ասին քի, «սալթը վրաներս բաներ մի գրիր, չէնք վար ժատունդ կը փակինք։ Կուզիս, քեզի կաղէթ գրելու սիռէքտօռ կը դնինք, ամա գրածներդ մենք цензоровить կանենք։ Քաղաքի քարտուղար պ. Ցարութիւնովն ալ, «քաղաքէն 1600 մանէթ субсидіи տուէք», կ'ասէ. «տպարանիս մէջը ես ալ կաղէթը կը տպամ» կ'ասէ։ «Թէպէտ քաղաքի թուղթերը տվանոյ դինով կը տպիմ ամա, ատ խիստ քիչ համին է», կ'ասէ։ «Իմ գրած մէն մէկ даклад-իս ու отзывъ-իս համար Իվան Նիքօլայիչը восхищаться կը լայ», կ'ասէ։ «То есть, ոչ մէկ քաղաքէ մը ատպէս изложеніях-ներով թուղթեր չին երթալ կուպեռնի», կ'ասէ։ Անիսկ, միտքը «աճափ ժալօվնաս երեք հազար մանէթ անել կը կարնամ», է։ Էկէր որ, տա աղկաղ անելու ըլայ նը՝ ինչ կ'ըլայ մեր հալը։ Ախռ ատպէս սեքլէդար գոնելը դժվար է։ Աճափ մէկ հատ ալ՝ դիմացը помощникъ տանք. որ՝ անկից ետև իրեն տպարանին բանը ռահաթ կէկ նայէ, ու управа երթալն ալ՝ շարաթը մէյմը անէ։

—

Մեր Սէմինարիային մէջն ալ՝ թէաթիր եղաւ, ու էնասուն հատ ալ՝ լաթինակ ուսանաւորներ կարդացուեցաւ։ Ամա, սէյիր անողները օրընճկրտալէն բերանները պիտի ճղքէին, էկէր Մինաս աղան վաղ բերել չը տար նը Լաթինին։

—

Է՛յ, կ'օղնէ ես խատարը ես ժումին. մէկ ամիսէն, մէկ հատ ալ՝ կը գրիմ «Մեղուին»։ Թէպէտ տահա բաներ չատ ունիմ ասելու հալխին, ամա՝ չուզիմ որ մեր խաղերը չատ դրդուին։

Ճ. Մ.

Նոր—Նախիջևան

---

[1]) Մուրչանին չը գիտցողը «Նոր—Դարի» մէջ թող փնտռէ։

բուած մի անձնաւորութիւն։ Ներկայ ամսի 9-ին, կիրակէ օրը, պատգամաւորաց ընտրութիւն է. տեսնենք հայ հասարակութիւնը ինչպէս կը վերաբերուի այդ ծանր խնդրին և ինչպիսի ընտրութիւն կանէ, սակայն մենք յուսաւ ենք, որ նա ըստ սովորութեան կ'ընտրէ արժանաւորը և հաւատարիմը...

* * *

Նոյն տեղից մեզ գրում են, որ Շամախու թեմական պատգամաւոր ընտրելու համար, Բագուում ընտրվել են մեծ. պ. պ. Ս. Վարշամեանց 84 ձայնով և Բ. Ստեփանեանը 27 ձայնով։

* * *

Այսօր ամսոյս 13-ին նախկին Արծրունու թատրոնում պ. Սաֆրազեանը, մասնակցութեամբ տ. Ալմայի և Թիֆլիսի դերասանաց, ներկայացնում է 1) Սանդրոմիտ կամ թագաւոր Սանտրուկ և 2) Կրոթ—Կրոթ։ Կը լինին և կենդանի պատկերներ։ Ցուսալի է, որ Թիֆլիսի հայ հասարակութիւնն իր ներկայութեամբ ցոյց կը տայ իւր հանակրութիւնը ու սէրը դէպի հայ թատրոն։

Խմբագիր Պ. ՍԻՄԷՈՆԵԱՆՑ։
Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՁԵԱՆՑ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑ

Լոյս տեսաւ №№ 7—8 (սեպտ.-հոկտ.) և ուղարկուեց բոլոր բաժանորդներին։

Բովանդակութիւն

№№ 7 և 8

Բարոյական ուղղոյղ ուսուցիչներին համար.— «Ուսման պաշտպանութիւնը» Ֆրանսիայում.—Կրօնի դաստաուութեան համակերպական սիստէմ.—Փոքրնական դասակիսատրութեան զործադրութեան մասին դպրոցներում իբրև մանուկներին զարգացնելու նպատ.— Ընթերցանութեան ճաշակ.—Թշուառ աղջիկ (բանաստ.)— Եկատերինադար քաղաքի հոգևոր դպրոցի տեղեկագիր.— Նամանակ Ուսմանից.— Դպրոցական առողջապահական հարցեր.=Ցիշատակարան.— Պատասխաններ խմբագրութեան կողմից.— Ծանուցմունք։

ԼՈՅՍ ՏԵՍԱԾ

«Աղբիւր» ամսագրի հրատարակութեան № 3 գրքոյկը.

ԺԱՆ ԲԱՏԻՍՏ ԼԻԼԻԻ ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Փոխադ. Տ. Յովհաննիսեան.

ԳԻՆԸ 10 ԿՈՊԵԿ Է։

Ծախվում է «Աղբիւրի» խմբագրատունը և Թիֆլիսի յատնի գրավաճառանոցներում։

ՀԱՅԿԱԶԱՆՑ ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ ՅԵՂԱԿԱՆ ՅՈՒՅԱԿԸ

Մովսէս Խորենացու պատմութեան մէջ.

Հեղինակութեամբ Մ. Էմինի։

ԳԻՆՆ Է 50 կոպէկ։

Վաճառվում է Թիֆլիսում կենդրոնական գրավաճառանոցում

ДИНАСТИЧЕСКІЙ СПИСОКЪ ХАЙКИДОВЪ

Въ исторіи Арменіи Мансея Хоренскаго.

Излѣдованіе Н. Эмина.

Цѣна 50 копѣкъ.

Продается въ Тифлисѣ въ Центральной книжной торговлѣ.

«ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ» և «ՈՒՄԷԼԵԱՆ» գրավաճառանոցներում և Շահվերդեանի գործակալութեան մէջ վաճառվում է՝

Յօգուտ «Թիֆլիսի ընկերութեան Հայերէն Գրքերի Հրատարակութեան» Հեռաւեալ երկասիրութիւնը։

«ԲԾՆԻ ՄԻՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԼԵՀԱՍՏԱՆԻ ԸՆԴ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՀՈՎՎՄԱՅ» Գործ Կ. Եղեան։ — Գինն է 2 ռուբլի։

ՀԱՅԿԱԿԱՆ

„ԳԵՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ“

Հայոց դպրոցների համար

ԳՐԵՑ

Մակար Տէր-Սարգսեանց

Երկրորդ բարեփոխեալ և ճոխացուցեալ հրատարակութիւն, վիմագրուած ընտիր կիսալիբանդրեան թղթի վերայ.

Գինը. հատով առնողներին . . . . . 25 կ.
Գումարով առնողներին . . . . 20 կ.

ՏԵՏՐԱԳՆԵՐ

Հայկական գեղագրութեան համար №№ 1, 2, 3, 4 պատրաստած յատ կապէս վերոյիշեալ գեղագրութեան ուղղութեան համեմատ։

Հարիւրը չորս — 4 ռուբլի. Հատը 5 կոպէկ.

Վաճառվում են Կենդրոնական Գրավաճառանոցում.

2—4

Վ. ՇԱՀՎԵՐԴԵԱՆԻ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ

Վաճառվում են երկու նոր գրքոյկներ

ՈՍԿԻ ՁԿՆԻԿ Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆԻ։ Թարգ. Գոռնա-Քաթիպայի

Գինն է 40 կոպէկ։

ԿՆՈՋ ԿՈՉՈՒՄԸ և ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

ԼՈՒԻԶԱ ԲԻԻԽՆԵՐԻ։ Թարգ. Շարուդաղեան։ Գինն է 40 կոպէկ։

ԱՒԵՆԱՐԻՍ ՀԱԿԱՅ-ՄԸՐՋԻՆ։ Թարգ. Գիւլազեանցի

Գինն է 40 կոպէկ։

„ԱՐՁԱԳԱՆՔ“

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՄԱՆՆԻՐ 1885 ԹՈՒԻՆ.

Ներքին գործոց պ. Նախարարի կարգադրութեամբ սոյն 1884 թուականի նոյեմբերի 8-ից «Արձագանքի» հրատարակութիւնը դադարեցրած է ուրբ ամսով։

«Արձագանքը» վերսին կսկսուի հրատարակուիլ 1885 թուականի յուլիսից նախկին ծրագրով և առաջուայ աշխատակիցների մասնակցութեամբ։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆԷ՝

Տարեկան 5 ռուբլի. կիսամեայ 3 ռուբլի։

«Արձագանքի» սոյն 1884 թ. բաժանորդներն 60 կոպ. ունին ստանալու չը հրատարակուած համարների փոխարէն, որը և կարող են ստանալ՝ ներկայացնելով իրանց անդորրագրերը կենդրոնական գրավաճառանոց, ուր առ ժամանակ գտնվում է խմբագրութեան գրասենեակը։

«Արձագանքի» 1885 թուականի տարեկան բաժանորդները սեպտեմբեր ամսին կ'ստանան երեսուն տպագրական թերթից բաղկացած մի մեծահատոր գիրք. գրական-գիտական բովանդակութեամբ։

Խմբագիր—Հրատարակիչ՝ ԱՔԻՄ ԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ.

ԲԱՑՈՒՄԱԾ Է ԱՌԱՋԻԿԱՑ 1885 ԹՈՒԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

„ԱՂԲԻՒՐ“

ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍԻ

(Երեխաների և դաստիարակների համար)

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

(ՏԱՐԵՆԸ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԷ 12 ՀԱՄԱՐ 2—3 ՏՊԱԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ)

Ամառուայ սկզբի և վերջի ամիսների համարները լոյս կը տեսնեն միասին։ Կը հրատարակուի միևնոյն դիքով, միևնոյն ուղղութիւնով և նոյն աշխատակիցների մասնակցութեամբ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

I) Վէպեր, մանրավէպեր, զրոյցներ, առակներ, հեքիաթներ, ճանապարհորդութիւններ, կենսագրութիւններ։

II) Բանաստեղծութիւններ։

III) Գիտութիւն և արուեստ։

IV) Հետաքրքիր տեղեկութիւններ։

V) Այլ և այլք։

ՋՈՒԱՐԱԿԱԼԻՔ.

VI) Մանկական, ֆրեբելեան, շախմատի և այլ խաղեր, բեբուներ, թուաբանական խնդիրներ։ Անեկդոտներ, հանելուկներ, շուտասելուներ։

VII) Երգեր ձայնագրած (նոտաներով)։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

VIII) Կրթութեան և դաստիարակութեան վերաբերեալ յօդուածներ, և տեղեկութիւններ։

IX) Առաջարկութիւններ, խորհուրդներ։

X) Մատենախօսութիւն և նոր գրքեր։

XI) Խառն լուրեր։

XII) Պատասխաններ։ Յայտարարութիւններ։

Երկրորդ բաժինը կը հրատարակուի առանձին թերթով տարին չորս անգամ։ Տարեկան բաժանորդները կը ստանան երկու պրէմիա՝ յուլիսին և դեկտեմբերին, իսկ մինչև դեկտեմբերի 15-ը իր բաժանորդագին վճարողը յունուարի №-ի հետ կը ստանայ երրորդ ձրի պրէմիա ևս։

«ԱՂԲԻՒՐԻ» տարեկան բաժանորդագինը 3 ռուբլի է, կէս տարուանը՝ 2 ռուբլի։

Հասցէն՝ Тифлисъ. Редакція „Агбюръ“. Իսկ արտասահմանից՝ Tiflis (Caucase) Redaction du journal. «AGBUR».

Խմբագիր—Հրատարակիչ՝ Տիգրան Նազարեանց։

ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆԱՄԲ

Աւետիք Տէր-Յակոբեանցի

ՀԻՆ-ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՔԱՐՏԷԶԸ

Գինն է 25 կոպէկ.

ԳՈՒՄԱՐՈՎ ԱՌՆՈՂՆԵՐԻՆ ԶԻՋՈՒՄՆ ԿԸ ԼԻՆԻ.

Ծանօթ. Քարտէզը այս անգամ լոյս է տեսնում աւելի մեծ մաշտարով միանգամայն սրբագրած և ուղղած։

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԴՈՒՐՍ ԵԿԱԻ

ՀԱՅԿՈՒՆՈՒ

„ՐԱՖԻ ԿԱՅԾԵՐԸ“

վերնագրով մատենախօսութիւնը։ Հրատարակութիւն Սէյլեաղ Ամիրեանցի։ Գինն է 80 կոպ. Ծախվում է Թիֆլիսում կենդրոնական և կովկասեան գրավաճառանոցներում, «Մեղուի» խմբագրատունը և Շահվերդեանի Պավիլիոնում։ Բացուում Շիրազեանցի խանութում և հրատարակչի մօտ Հեռաւեալ հասցէով.— Баку. Сеяду Михайловичу Амирянцу. Գումարով գնողներին մեծ զիջումն կը լինի։

(20—10)

ОБЪ ИЗДАНІИ ВЪ 1885 ГОДУ ЖУРНАЛА

„ЮРИДИЧЕСКОЕ ОБОЗРѢНІЕ“.

(ГОДЪ ПЯТЫЙ).

Журналъ, какъ и прежде, будетъ выходить по четвергамъ, въ размѣрѣ отъ 1 до 2 печатныхъ листовъ, по слѣдующей программѣ:

I. Статьи по **всѣмъ вопросамъ**, вытекающимъ **изъ теоріи права и судопроизводства.**—**II. Перечень, изложеніе и обсужденіе** важнѣйшихъ **распоряженій** и **узаконеній** правительства.—**III. Судебная хроника:** а) отчеты о засѣданіяхъ въ судахъ, преимущественно Кавказскаго края, и б) особенно интересныя рѣшенія Кавказскихъ гражданскихъ судовъ по вопросамъ права и судопроизводства, вызваннымъ мѣстными особенностями края.—**IV. Корреспонденціи** юридическаго содержанія.—**V.** Краткіе **отчеты о новыхъ книгахъ** юридическаго содержанія (Обзоръ юридической печати и библіографія).—**VI. Смѣсь** (разныя извѣстія.) случаи изъ судебной жизни и практики.—**VII. Тезисы и текстуальное изложеніе** кассаціонныхъ рѣшеній: а) департаментовъ сената и б) Тифлисской судебной палаты.—**VIII.** Извлеченіе **изъ приказовъ** о важнѣйшихъ назначеніяхъ по вѣдомству Юстиціи.—**IX. Судебный указатель. Резолюціи** Тифлисской судебной палаты по дѣламъ **апелляціоннымъ** и **кассаціоннымъ.**—**X. Объявленія**—казенныя и частныя.

Выполнивъ, по возможности, свои прошлогоднія обѣщанія предъ читателями, редакція «Юрид. Оборз.» постарается придать своему журналу въ будущемъ году еще бовышій интересъ, при содѣйствіи многихъ прежныхъ и нѣкоторыхъ новыхъ сотрудниковъ.

Кромѣ статей **общаго юридическаго характера** по вопросмъ гражданскаго и уголовнаго права, межевымъ, нотаріальнымъ, судебно военныхъ и пр., а такіе **о внутренней жизни кавказскихъ судовъ и о вопросахъ дня,**—въ 1885 г. будутъ помѣщены: **грузинскіе** законы царя Вахтанга, съ необходимыми предисловіемъ и примѣчаніями, и продолженіе изслѣдованія законовъ: **армянксихъ** — по Мхитару Гошу, **еврейскихъ**—по Маймониду, **мусульмакскихъ**, собственно Кавказскихъ народностей; ихъ адаты и пр.

УСЛОВІЯ ПОДПИСКИ:

Редакція и Администрація журнала (для пріема подписки, объявленій и разничной продажи)—Тифлисъ, Сололакская ул., д. кн. Меликова.—подписная цѣна на журналъ, съ доставкою и пересылкою: на годъ—**10 р.**, на 6 мѣс.—**6 руб.**, на 3 мѣс.—**3 р 20 к.** на 1 мѣс. —**1 р. 25 к.**—**Разсрочка въ платежѣ денегъ** допускается—**для годовыхъ** подписчиковъ: при подпискѣ 4 р., въ мартѣ и апрѣлѣ по 3 р., и для **полугодовыхъ**: при подпискѣ 3 р., и черезъ два мѣсяца еще 3 р. **Для гг. студентовъ**—годовая плата 8 р; полугодовая 5 р. **Желающіе пріобрѣсти журналъ за прежніе годы,** уплачиваютъ: за 1881 г.—8 р. 20 к. и за всѣ послѣдующіе по 10 руб. за годовой экземпляръ. **ПРи перемѣнм адреса** вносятъ 40 к. **За объявленія**, казенныя и частныя—строка петита 10 коп., ½ страницы 3 р. 25 к., цѣлая стран. 6 руб. 50 коп.

При доставленіи въ редакцію „Юридическаго Обозрѣнія“ двухъ экземпляровъ юридическаго сочиненія, о немъ будетъ отчетъ и сдѣлана публикація.

Подписчики «Юрид. Об.» имѣютъ право на полученіе, чрезъ редакцію, свѣдѣній о положеніи ихъ дѣлъ въ Тиф. судеб. учрежд.—въ текстѣ журнала безвозмездно, а письменныя и телеграфныя—по соглашенію съ ред. журнала.

Редактор-издатель **А. С. ФРЕНКЕЛЬ.**

ДОЗВОЛЕННО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ, 12-го Декабря 1884 г. Типограф. М. Рот. и К-о. На Гол. проспектѣ Домъ № 41.

Տպարան Մ. Ռոտինեանց և ընկ.